

Մահմանափակ պատասխանատվությամբ բաց ընկերությունների միաձուլման կամ բաժանման վերաբերյալ անկախ փորձագետի զեկույցի անհրաժեշտության մասով 78/855/ԵՏՀ և 82/891/ԵՏՀ Խորհրդի հրահանգները փոփոխող Եվրոպական պառլամենտի և Խորհրդի 2007 թվականի նոյեմբերի 13-ի 2007/63/ԵՀ հրահանգ

ԵՎՐՈՊԱԿԱՆ ՊԱՌԼԱՄԵՆՏԸ ԵՎ ԵՎՐՈՊԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՈՒՐԴԸ,

հաշվի առնելով «Եվրոպական համայնքի հիմնադրման մասին» պայմանագիրը և, մասնավորապես, դրա 44(2)(է) հոդվածը,

հաշվի առնելով Հանձնաժողովից ստացված առաջարկը,

հաշվի առնելով Տնտեսական և սոցիալական հարցերով եվրոպական կոմիտեի եզրակացությունը [1],

գործելով Պայմանագրի 251-րդ հոդվածով սահմանված ընթացակարգի համաձայն [2],

Քանի որ

1) Առավել արդյունավետ կարգավորման վերաբերյալ Համայնքի քաղաքականությունները, հատկապես, որոնք մանրամասն շարադրված են Խորհրդին, Եվրոպական պառլամենտին, Տնտեսական և սոցիալական հարցերով եվրոպական կոմիտեին և Տարածաշրջանային կոմիտեին ուղղված 2006 թվականի նոյեմբերի 14-ի և 2007 թվականի հունվարի 24-ի երկու Հաղորդագրություններում, որոնք համապատասխանաբար վերնագրված են «Եվրոպական միությունում առավել արդյունավետ կարգավորման ռազմավարական ուսումնասիրություն» և «Եվրոպական միությունում վարչական ծախսերի նվազեցման գործողությունների ծրագիր», կարևորում են գործող օրենսդրությամբ ձեռնարկությունների հանդեպ կիրառվող վարչական ծախսերի նվազեցումը՝ որպես նման ձեռնարկությունների մրցունակության բարձրացման և Լիսաբոնի օրակարգով սահմանված նպատակների իրականացման առանցքային բաղադրիչ,

2) «Մահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների միջսահմանային միաձուլումների մասին» Եվրոպական պառլամենտի և Խորհրդի 2005 թվականի հոկտեմբերի 26-ի 2005/56/ԵՀ հրահանգը [3] նախատեսում է անկախ փորձագետների կողմից միաձուլման նախնական պայմանների ուսումնասիրման և դրա մասին զեկույցի պատրաստման

պարտականությունից ազատում, եթե բոլոր բաժնետերերը համաձայնում են, որ նման զեկույցի անհրաժեշտություն չկա,

3) Սահմանափակ պատասխանատվությամբ բաց ընկերությունների միաձուլման վերաբերյալ Խորհրդի 78/855/ԵՏՀ [4] հրահանգը չի նախատեսում միաձուլման նախնական պայմաններից բխող պարտականություններից նման ազատում, իսկ սահմանափակ պատասխանատվությամբ բաց ընկերությունների բաժանման վերաբերյալ Խորհրդի 82/891/ԵՏՀ [5] հրահանգը բաժանման նախնական պայմաններից բխող պարտականություններից նման ազատում կիրառելու անհրաժեշտության վերաբերյալ որոշման կայացումը թողնում է անդամ պետությունների հայեցողությանը,

4) բաժնետերերի համար անկախ փորձագետի կողմից նման ուսումնասիրության անցկացումը պահանջելու անհրաժեշտություն չկա, եթե բոլոր բաժնետերերը համաձայն են, որ այն կարելի է չիրականացնել: Բաժնետերերի նման համաձայնություն թույլատրող՝ 78/855/ԵՏՀ և 82/891/ԵՏՀ հրահանգների որևէ փոփոխություն չպետք է հակասի մասնակից ընկերությունների պարտատերերի շահերի պաշտպանության համակարգերին, որոնք սահմանվում են անդամ պետությունների կողմից՝ այդ հրահանգների համաձայն, ինչպես նաև գործընթացում ընդգրկված ընկերությունների աշխատողներին տեղեկությունների տրամադրումն ապահովող նորմերին,

5) հետևաբար, պետք է համապատասխան փոփոխություններ կատարել 78/855/ԵՏՀ և 82/891/ԵՏՀ հրահանգներում,

ԸՆԴՈՒՆԵՑԻՆ ՍՈՒՅՆ ՀՐԱՀԱՆԳԸ.

Հոդված 1

Մույն Հրահանգի նպատակն է փոփոխություններ կատարել Խորհրդի 78/855/ԵՏՀ և 82/891/ԵՏՀ հրահանգներում՝ սահմանափակ պատասխանատվությամբ բաց ընկերությունների միաձուլման կամ բաժանման դեպքում անկախ փորձագետի զեկույցի անհրաժեշտության մասով:

Հոդված 2

Սույնով 78/855/ԵՏՀ հրահանգում կատարվում են հետևյալ փոփոխությունները.

1. 10-րդ հոդվածը լրացնել հետևյալ պարբերությամբ.

«4. Միաձուլման նախնական պայմանների ուսումնասիրություն և փորձագիտական զեկույց չի պահանջվում, եթե նման համաձայնություն է ձեռք բերվում միաձուլման գործընթացում ընդգրկված յուրաքանչյուր ընկերության՝ բոլոր բաժնետերերի և ձայնի իրավունք վերապահող այլ արժեթղթերի սեփականատերերի միջև:»:

2. 11(1) հոդվածում (ե) կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«ե) անհրաժեշտության դեպքում 10-րդ հոդվածով նախատեսված զեկույցները:»:

Հոդված 3

Սույնով 82/891/ԵՏՀ հրահանգում կատարվում են հետևյալ փոփոխությունները.

1. 9(1) հոդվածում (ե) կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«ե) անհրաժեշտության դեպքում 8-րդ հոդվածով նախատեսված զեկույցները:»:

2. 10-րդ հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Հոդված 10

1. 8(1) հոդվածով նախատեսված ընկերության բաժանման նախնական պայմանների ուսումնասիրություն և փորձագիտական զեկույց չի պահանջվում, եթե նման համաձայնություն է ձեռք բերվում բաժանման գործընթացում ընդգրկված յուրաքանչյուր ընկերության՝ բոլոր բաժնետերերի և ձայնի իրավունք վերապահող այլ արժեթղթերի սեփականատերերի միջև:»:

2. Անդամ պետությունները կարող են թույլատրել 7-րդ հոդվածը և 9(1)(գ) և (դ) հոդվածը չկիրառել, եթե նման համաձայնություն է ձեռք բերվում բաժանման գործընթացում ընդգրկված

յուրաքանչյուր ընկերության՝ բոլոր բաժնետերերի և ձայնի իրավունք վերապահող այլ արժեթղթերի սեփականատերերի միջև»:

Հոդված 4

1. Անդամ պետությունները պետք է գործողության մեջ դնեն սույն Հրահանգի կատարման համար անհրաժեշտ օրենքները, կանոնակարգերը (այլ նորմատիվ իրավական ակտերը) և վարչական ակտերը ոչ ուշ, քան մինչև 2008 թվականի դեկտեմբերի 31-ը:

Նրանք այնուհետև Հանձնաժողովին են ներկայացնում այդ ակտերի տեքստը և դրանց ու սույն Հրահանգի համեմատական աղյուսակը:

Անդամ պետությունների կողմից այդ ակտերն ընդունվելիս դրանք պետք է հղում պարունակեն սույն Հրահանգին, իսկ պաշտոնական հրապարակման դեպքում՝ ուղեկցվեն նման հղումով: Նման հղում կատարելու ձևերը սահմանում են անդամ պետությունները:

2. Անդամ պետությունները Հանձնաժողովին են ներկայացնում ներպետական իրավունքի հիմնական դրույթների տեքստը, որ նրանք ընդունում են սույն Հրահանգով կարգավորվող ոլորտներում:

Հոդված 5

Սույն Հրահանգն ուժի մեջ է մտնում Եվրոպական միության պաշտոնական տեղեկագրում հրապարակվելուց 20 օր հետո:

Հոդված 6

Սույն Հրահանգը հասցեագրված է անդամ պետություններին:

Կատարված է Ստրասբուրգում, 2007 թվականի նոյեմբերի 13-ին:

Եվրոպական պառլամենտի կողմից

Նախագահ

Հ. Գ. Փոթերինգ

Խորհրդի կողմից

Նախագահ

Մ. Լորո-Անթունես

[1] ՊՏ թիվ C 175, 27.07.2007թ., էջ 33:

[2] Եվրոպական պառլամենտի 2007 թվականի հունիսի 11-ի եզրակացություն (պաշտոնական տեղեկագրում դեռ չի հրապարակվել) և Խորհրդի 2007 թվականի հոկտեմբերի 22-ի որոշում:

[3] ՊՏ թիվ L 310, 25.11.2005թ., էջ 1:

[4] Պայմանագրի 54(3)(է) հոդվածի հիման վրա ընդունված՝ «Սահմանափակ պատասխանատվությամբ բաց ընկերությունների միաձուլումների մասին» Խորհրդի 1978 թվականի հոկտեմբերի 9-ի 78/855/ԵՏՀ երրորդ հրահանգ (ՊՏ թիվ L 295, 20.10.1978թ., էջ 36): 2006/99/ԵՀ հրահանգով վերջին անգամ փոփոխված հրահանգ (ՊՏ թիվ L 363, 20.12.2006թ., էջ 137):

[5] Պայմանագրի 54(3)(է) հոդվածի հիման վրա ընդունված՝ «Սահմանափակ պատասխանատվությամբ բաց ընկերությունների բաժանման մասին» Խորհրդի 1982 թվականի դեկտեմբերի 17-ի 82/891/ԵՏՀ վեցերորդ հրահանգ (ՊՏ թիվ L 378, 31.12.1982թ., էջ 47):